1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թղթակցությունները խմբագրատանը.
Մեր հասցէն Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տէլէֆոն № 253.

Կիրակի, սեպտեմբերի 26-ին
ԲԺՇԿԱՊԵՏ
ԵԳՈՐ ՍԵՐԳԵԵՎԻՉ ԲԱԲԵԱՆԻ
մահվան երկրորդ տարեդարձի օրը. ցերեկվայ ժամը 12-ին կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍ Խօջիվանքում, հանգուցեալի գամբարանի վրա, որի մասին խորին վշտով յայտնում է հանգուցեալի կինը. 1117. 2—2

Վարդուհի և Արշակ ՍՏԵՓԱՆԵԱՆՑՆԵՐՆ իրանց զաւակներով յայտնում են ազգականներին և բարեկամներին, որ այսօր, կիրակի, սեպտեմբերի 26 ին, իրանց դստեր՝ III գիմնազիայի VI դասատան աշակերտուհի
ՄԱՐԻ-ՔՍԻՍ ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ
մահվան ՏԱՐԵԴԱՐՁԻ առիթով Զգուարէնի եկեղեցում (Միջին փողոց) կը կատարվի ՀՈԳԵՀԱՆԳԻՍ. Պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 10½-ին, վի պատարագ և ՀՈԳԵՀԱՆԳԻՍ՝ ժամը 12-ին. 1125. 1—1

Թամամ Գէորգեան Գրիգորեանցը և Աւետիք Օղախեանցը յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինն իր թանկագին ամուսնու, իսկ երկրորդն իր սիրելի քենակալի՝
Յովհաննէս Յովսէփեան ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ
մահը, որ տեղի ունեցաւ սեպտեմբերի 23-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, սեպտեմբերի 26-ին, առաւօտեան ժամը 10-ին՝ հանգուցեալի բնակարանից (Շերեմետեւսկայա փող. № 14, Դիպուբէում) դէպի Թանգոյեան ս. Աստուածածնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։
1128. 1—1

ՆՈՐԻՑ ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ 4 ՕՐՈՎ
Սեպտեմբերի 27-ին, 28-ին, 29-ին եւ 30-ին
Պ. Ս. ԴՈՐՕԺՆՕՎԻ
ԵՒՐՕՊԱԿԻԷՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ
Միխայլովկի պր., Նորակառույց ս. դարձակ շինութեան մէջ, լիթերականների եկեղեցու շաբթում.
ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌԸ
Կը շարունակվի նորից 4 օրով, մինչեւ հոկտ. 1-ը,
ԱՅՆ Է՝ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-ին, 28-ին, 29-ին եւ 30-ին:
Բոլոր այն ապրանքները, որոնք ՓԱՅԼԵԼ են ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌԻՆ համար նշանակվածից, վերոյիշեալ օրերի ընթացքում կը վաճառվեն
ԱՊՇԵՏՈՒՅԻՉ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ
Էժան վաճառքն աւարտվելուց յետոյ, կը սաստվեն նորից
ՍԷԶՕՆԻ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ
1—1 1126. Պ. Ս. ԴՈՐՕԺՆՕՎ

ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿ. „ՇՈՒԿԵՐՏ եւ ԿՕՄ.“ ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
Պետերբուրգի «ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ» ռուսական էլեկտրո-տեխնիկական գործարանների ակց. ընկ., Բերլինի «ՍԻՄԷՆՍ և ԳԱԼՍԿԷ» ակց. ընկ., Գերլիցի «ՍԻՄԷՆՍ ԶՈՒԿԵՐՏ-ԱԼԵՔՍԷ» ակց. ընկ., Գլազմէնի մեքենագործական ընկ. եւ Բոլ. «ԿՐՕՍՍԼԷՅ» անգլիական գործարանի ներկայացուցիչներ։
ԷԼԵՔՏՐՕՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Դինամօ-մեքենաներ, էլեկտրաշարժիչներ ամեն տեսակ և այժի մշտական և փոփոխվող էլեկտր. հոսանքի համար։ Էներգիայի յանձնումն սրաշ հեռաւորութեան վրա։ Քաղաքներ և մասնաւոր ձեռնարկութիւններ լուսաւորելու համար կենտրոնական կայարանի սարքում։ Բանոֆորմատորներ։ Օդամաքրիչներ ամեն տեսակ նըպատակի համար։ Օգնոնի օդամաքրիչներ։
ԷԼԵՔՏՐ. ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Մշտական և փոփոխվելիք լուսաւոր. համար մէկ և բազմաթել հոսանք։ Երկաթուղային ապդանշան։
ՀԵՌԱԳՐԻ ԵՒ ՀԵՌԱԽՕՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — Անթել հեռագիր։ Հեռագրական ապարատներ։ Ամեն տեսակ հեռախօսներ։ Զանգագոյժ ապդանշան գործիքներ։
ԼԱՄՊԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ — ԱՂԵՂՆԱՁԵՒ լամպաներ՝ ուշագրաւ և սովորական։ Ցնտեռական լամպաներ „ՏԱՆՏԱԼ“ և „ՄԻ-ՊԱՏՐՈՆԱՑԻՆ ԼԱՄՊԱՆԵՐ“։ Լամպանոց ածխային թելով։
ՊԵՀԵՍՏՈՒՄ կան՝ դինամօ-մեքենաներ, էլեկտրաշարժիչներ, հաղորդիչներ, զանազան տեսակ նիւթեղէններ էլեկտրական կառուցուածքների համար և այլն։
ՊՐԵՅՏ-ԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ եւ ՆԱԽԱՀԱՇԻՒՆԵՐԸ ուղարկվում են ըստ առաջին պահանջման։ Տէլէֆոն № 533. Հասցէն հեռագիրների համար՝ Шукертъ, Тифлисъ.
(4.) առ. № 1. 433. 26—13

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԸ
Չորեքշաբթի, սեպտեմբերի 29-ին
Փոխադրվում է ձմերային շինութիւնը
ԱԶԴ.—Առաջին ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ ձմերային շինութեան մէջ տեղի կունենայ հինգշաբթի, սեպտեմբերի 30-ին։
առ. 1129. 1—1

ԴԱԾՆԱԿԱՀԱՐ
ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆ
(4.) առ. Ելիզավէտինսկայա, № 40. 985. 20—11

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՇՈՐ ԴԷՊԵՐԸ

Վերջին մի քանի օրերի ընթացքում տեղի ունեցան քաղաքական խոշոր դէպքեր։

Ռուսաց արտաքին գործերի մինիստր Իզվոլսկիի հրաժարման լուրը, որ արտասահմանի թերթերը այնքան յամառութեամբ տարածում էին, իրականացաւ։ Իզվոլսկին, արձակվելով արտաքին գործերի մինիստրի պաշտօնից, նշանակվեց ռուսական դեսպան Պարիզում։

Իզվոլսկիի՝ իբրև ռուսական պետութեան արտաքին քաղաքականութեան ղեկավարի՝ հրաժարականը, անկասկած, խոշոր դէպք է, որովհետև նրա գործունէութիւնը 4½ տարվայ ընթացքում նշանակալից եղաւ նրանով, որ նա արմատականապէս վերաշինեց ռուսական միջազգային յարաբերութիւնները։ Ծայրագոյն Արևելքում տեղի ունեցած դէպքերից և կրած պարտութիւններից յետոյ, ուրիշ կերպ էլ լինել չէր կարող. պէտք է որ նախկին արտաքին քաղաքականութիւնը արմատականապէս բարեփոխվէր։ Սակայն դրա հետ միասին Իզվոլսկիի մինիստրութեան օրով գործվեցին և մի շարք պատմական խոշոր սխալներ, ինչպէս օրինակ ռուսական քաղաքականութիւնը Իռանում և այլն, որոնք ի չիք դարձրին ձեռք բերված բոլոր դիպլոմատական աջողութիւնները։

Չէ կարելի չարձանագրել, որ Իզվոլսկիի ձգտումն էր ամբողջ ժամանակ՝ դաշնակցել Արևմտեան Եւրոպայի ազատամիտ պետութիւնների մի խմբի հետ։ Նա ամեն կերպ աշխատում էր ռուս-ֆրանսիական դաշնակցութեան հետ միացնել և Անգլիան, Իտալիան։ Նա աշխատում էր նոյնպէս Հեռաւոր Արևելքում դաշնակից ունենալ Եապոնիան և կազմել Ռուսաստանից, Ֆրանսիայից, Անգլիայից և Իտալիայից մի չորեքպետեան դաշնակցութիւն՝ Եւրոպական նախկին բռնապետական ռեժիմի օրով աւելի լաւ էր։ Այդ անարխիան և արդարացնում է ռուսաց զօրքերի Պարսկաստանից յետ չը կանչելու անհրաժեշտութիւնը։

Ժամանակ է, որ պարսիկ իսկական հայրենասէրները ըմբռնեն, որ Պարսկաստանում տիրող ներկայ անարխիան ընդունակ է միայն վարկաբեկել յեղափոխութիւնը և ամրացնել ժողովրդի մէջ այն համոզմունքը, թէ նախկին ռեժիմը աւելի ցանկալի էր։

Հ. Առաքելեան

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՊՕՐՏՈՒԳԱԼԻԱՅՈՒՄ

Լոնդոն, 24 սեպտեմբերի

Պորտուգալիայի դէպքերի առիթով Ռէյտէրը հաղորդում է, որ արտաքին գործերի մինիստրի ստացած առաջին տեղեկութիւնը «Իսաէրն-Տելէգրաֆի» հեռագիրն էր, որ ստացվեց երեքշաբթի առաւօտեան։ Տեղեկութիւնը ապդարարում է, որ Լիսաբոնը կողմնացված է, բռնկվել է յեղափոխութիւնը։ Միայն չորեքշաբթի երեկոյեան հեռագիր ստացվեց Լիսաբոնի անգլիական դեսպանից։ Ուրիշ տեղեկութիւններ չը կան։ Թագաւորական ընտանիքի ուր գտնվելը յայտնի չէ։ Կարծում են, որ ընտանիքը յամենայն դէպս չէ գտնվում «Նիւ-Կէսայ» զրահանաւի վրա։ Պորտուգալական և սպանական դեսպանները այցելեցին ստատս-սեկրետարի օգնական Նիկոլսոնին։

Գիշերվայ ժամը 1-ին Ռէյտէրը տեղեկութիւններ ստացաւ Գիբրալտարից, որ պորտուգալական «Ամէլիա» զրահանաւը մայր-թագուհի և գահաժառանգ արքայազն Ալֆոնսի հետ եկաւ այնտեղ երեկոյեան ժամը 11-ին։ Աւելի ուշ հաղորդեցին Գիբրալտարից, թէ թագաւորը և թագուհի դուստրը նոյնպէս զբօսանաւի վրա են։

Մադէրում և Ազորեան կղզիներում յեղափոխութեան տեղեկութիւնը ընդունվեց հանգիստ։ Չորեքշաբթի օրը, երեկ. ժամը 11-ին, հանրապետութիւն հռչակվեց ամբողջ Պորտուգալիայում։ Մէջադէպեր չեղան։ Տակսէրաստուզի վերջին կաբինէտի մինիստր-նախագահ Բաֆէտը վիրաւորված է։ Հանրապետականները ձերբակալեցին մի քանի օֆիցէրների, ի թիւս որոց Ֆրանկոյի կաբինէտի նախկին մինիստր Օրմէլասին։ Տէօֆիլ-Բրագան անգլիական դեսպանի հետ խօսակցելիս վստահեցրեց, որ Պորտուգալիան խորին յարգանք է տածում դէպի Անգլիայի կառավարութիւնը. հանրապետականները շարունակում են բարեկամ մնալ Անգլիայի հետ։

«Դէյլի-Խրօնիքլին» հեռագրում են Լիսաբոնից, որ յեղափոխութիւնը անսպասելի էր նոյն իսկ հանրապետականների կոմիտէի համար. ազգաբնակութիւնը անտարբեր մնաց։ Ապստամբութիւնը, որ բռնկվեց սեպտ. 20-ի երեկոյեան, կառավարութեանը յանկարծակիի բերեց։ Քաղաքի բերդապահ զօրքի հրամանատարը և շատ օֆիցէրներ բացակայ էին Լիսաբոնից։ Ապստամբ թնդանօթաձիգները ձերբակալեցին զօրանոցներում գտնվող օֆիցէրներին և ազգաբնակութեանը սկսեցին զէնք բաժանել։ Արևի ծագման հետ նաւատաները զօրանոցների վրա բարձրացրին հանրապետական դրօշակ. միաժամանակ դրօշակներ ծածանեցրին երեք պատերազմական նաւերի վրա։ Ականանաւերը սկսեցին ռմբակոծել Նեսէսի-Դագէս պալատը։ Երկրորդ հրացանաձգութեամբ տապալվեց թագաւորական զինանաւը։ Մանուէլ թագաւորը սկզբում հանդստութեամբ դիտում էր ռմբակոծութիւնը, յետոյ շրջապատողների խնդրանքով հեռացաւ պալատից։ Հանրապետականները թագաւորին որոնում էին բրազիլական «Սան-Պաօլո» ականանաւի վրա, սակայն հրամանատարը թոյլ չը տուաւ նրանց։ Ականանաւերի արձակած գնդակներից զինուորական և ծովային մինիստրութիւնների մէջ սպանվեցին շատ պաշտօնեաներ, մի քանի քաղաքապահ զինուորներ և բազմաթիւ հանդիսատեսներ։ Փողոցներում տեղի էր ունենում կատաղի թնդանօթային կռիւ թագաւորին հաւատարիմ զօրքերի և յեղափոխականների միջև։ Միապետական զօրքերը, առանձնապէս ծունիցիպալ գվարդէյցիները, 30 ժամ կռւում էին օրինակելի քաջութեամբ և օգտվեցին մթութիւնից իրանց դիրքերը ամրապնդելու համար։

Հանրապետական դրօշակը Մատէյրում բարձրացրին առանց միջադէպերի։

Ռէյտերի գործակալութիւնը վճռականապէս հերքում է արտասահմանում տարածված այն տեղեկութիւնները՝ իբր անգլիական կառավարութիւնը մասնակցել է այն բանակցութիւն-

ներին, որ վարեցին Պորտուգալիայի հանրապետական պարագլուխները անգլիական դեսպանի հետ։ (Հ. Գ.)

—

Մադրիդ, 24 սեպտեմբերի

«Մանանա» լրագիրը հաղորդում է, որ Մանուէլը փախաւ անգլիական միսիան։ Ժամանակաւոր կառավարութիւնը խորհուրդ է տալիս ժողովրդին յարգանք տածել դէպի թագաւորական տունը։ Ժամանակաւոր կառավարութեան անդամ Մաշադոն շրջում է քաղաքները և գիւղերը, խորհուրդ է տալիս հանգիստ մնալ։ Մայրաքաղաք իրաւունք ունեն մտնել միայն յեղափոխականներին յարած զօրքերը։ Թագաւորի ներկայութեամբ տեղի ունեցաւ մինիստրների խորհրդի նիստը Պորտուգալիայի դէպքերի առիթով։ Կանալէխասը, հեռանալով պալատից, ասաց, որ թագաւորական ընտանիքի որ տեղ գտնվելը յայտնի չէ։ Լիսաբոնի հետ հաղորդակցութիւնը դեռ խզված է։ Սանդարէտ եկողները մնում են։

Պալատում։ Հանրապետական Ակարատէն յայտնեց, որ կարծում է, թէ կառավարութիւնը խիստ չէզոքութիւն է պահում Պորտուգալիայի կառավարութեան ձևը փոփոխվելու առիթով։ Հեռաւորը պահանջում է բացատրութիւն տալ արտասահման զօրքեր և Լիսաբոն երեք նաւեր ուղարկելու մասին և ցաւում է, որ սպանական հանրապետականները իրաւունք չունեն համակրանք յայտնել պորտուգալացիներին։ Կանալէխասը պատասխանեց, որ կառավարութիւնը այնպիսի հակասական տեղեկութիւններ է ստացել, որ նա չէ կարող հռչակված հանրապետութիւնը կատարված փաստ համարել։ Լուրերը են պատում, որ Լիսաբոնում տեղի են ունեցել նոր ընդհարումներ. թագաւորին հաւատարիմ զօրքերը ստացել են օժանդակ գնդեր. կառավարութիւնը դեռ տեղեկութիւն չունի նոր կազմի մասին իր պաշտօնական անձից։ Սպանիան այդ պատճառով պէտք է բաւականանայ Պորտուգալիայի դէպքերը իբրև ապստամբական շարժում որակելով, որի հետևանքները անյայտ են... (յետոյ հեռագիրը խզվում է)։ Նաւերը ուղարկվել են միմիայն սպանացիների պաշտպանութեան համար. զօրքերը սահմանագլխում միշտ էլ ստանում էին հրահանգներ։

Պաշտօնապէս հաղորդվում է, որ «Ամէլիա» զբօսանաւով պորտուգալական ազգային դրօշակի տակ եկան Գիբրալտար և ափ իջան պորտուգալական թագաւոր Մանուէլը, երկու թագուհիները և Օպորտոյի դուքսը։ (Հ. Գ.)

—

Լիսաբոն, 24 սեպտեմբերի

Ժամանակաւոր կառավարութիւնը նշանակեց բոլոր նահանգների համար քաղաքացիական կառավարիչներ։ Բրազիլիայի նախագահ մարշալ Ֆոնսէկան Տէօֆիլ-Բրագայի ուղեկցութեամբ աւտոմօբիլով անցաւ մայրաքաղաքի միջով։ Եկաւ անգլիական «Մինէրվա» յածանաւը։ Զօրքերի մի մասը Լիսաբոնում է և ամրացած բանակներում։ Գաւառներից տեղեկութիւններ չը կան։

Թագաւորական ընտանիքի անդամները գանազան ճանապարհներով դիմեցին Մաֆրու, որտեղից եկան «Ամէլիա» զբօսանաւը, որ խարիսխ էր ձգել Էրիսէյր քաղաքի մօտ։ Անկախ առաջադիմականների կուսակցութիւնը քայքայվեց։ Կուսակցութեան լիդէր Ալֆօիմը յարեց հանրապետականների կողմը։ Զօրքերը գաւառում միանում են հանրապետականներին։ Մունիցիպալ գվարդիան, որ անցաւ հանրապետականներին։ Մունիցիպալ գվարդիան, որ անցաւ հանրապետութիւնը միջոցներ է ձեռք առել ապահովելու թագաւորին և թագաւորական ընտանիքին։ Մարիա-Պիան կը մեկնէ Իտալիա։

Լիսաբոնի ֆրանսիական դեսպանը անթել հեռագրով անգլիական մի նաւից Պիշօնին հաղորդեց, որ թագաւորը և թագուհին գտնվում են Մաֆրուում։ Լօնդօնից պաշտօնական հեռագիր ստացվեց, որ թագաւորը Մաֆրուում չէ։ «Մինէրվա» ականանաւը, որ հրաման ստացաւ ուղեկցել «Ամէլիային», չը կարողացաւ գտնել նրան։ Սպանական կառավարութեան տեղեկութիւնների համաձայն թագաւորը «Ամէլիայի» վրա է։

«Տանին» հեռագրում են Մադրիդից, որ Լիսաբոնի 11-րդ թնդանօթաձիգ գունդը, հանրապետականների հետ առնչող ընդհարում ունենալուց յետոյ, անձնատուր եղաւ և ընդունեց հանրապետութիւնը երեք հեռակայ գնդերի հետ միասին։ Ընդհանուր կորուստները հաշուում են 3,000 մարդ։ Սեպտեմբերում ընդհարում եղաւ բոյալիստ հեծելազօրի և ինֆանտէրիայի միջև։ Կորուստները 900 մարդ են։ (Հ. Գ.)

—

Էլիզէրբոլ, 24 սեպտեմբերի

Իտալական «Իտանա» ակնանաւը մեկնեց Լիսաբոն։ (Հ. Գ.)

—

Բերլին, 24 սեպտեմբերի

Պորտուգալական հաւատարմատարը պաշտօնապէս տեղեկացրեց գերմանական կառավարութեան Պորտուգալիայում հանրապետութիւն յայտարարվելու մասին։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Փոթիից մեզ հեռագրում են.

Ներքին գործերի մինիստրը, համաձայնութեան գալով ֆինանսների և առևտրի մինիստրների հետ, հաստատեց Փոթիի քաղաքային դումայի որոշումը, որով 1909 թ. մայիսի 24-ի օրէնքի հիման վրա յօգուտ Փոթի քաղաքի սահմանվում է տուրք տեղական նաւահանգստով անցնող ապրանքներից այս կարգով. 1) աղիւսից—$1/10$, 2) փայտից—$1/4$, 3) մարգանէցից—$2/5$, միւս բոլոր ապրանքներից պուդից կէս կոպէկ։

Սեպտեմբերի 8-ին և 14-ին տեղի ունեցած քաղաքային ձայնաւորների ընտրութիւնները, որոնց դէմ ոչ ոք չը բողոքեց, հաստատվեցին նահանգական իշխանութեան կողմից։

Քաղաքագլուխ՝ Նիկոլաէվ

—

Մոսկվա, 24 սեպտեմբերի

Եկան Միացեալ-Նահանգների զինուորական մինիստր Դիկէնսօնը և գեներալ Էդուարդսը ընտանիքներով։ (Հ. Գ.)

—

Հէլսինգֆորս, 24 սեպտեմբերի

Սենատը պատուիրագրեց նահանգապետներին միջոցներ ձեռք առնել կատարել Բարձրագոյն կամքը՝ անմիջապէս զինուորական վարչութեան յանձնելու գրաւած հողերը։ Դատախազը բողոքեց հատարելով յանձնելը՝ 1898 թուի Բարձրագոյն որոշման խախտում։ (Հ. Գ.)

—

Կապշտադտ, 24 սեպտեմբերի

Գեներալ Բոման Լոզբէրգում ընտրվել է պատգամաւոր միութեան պարլամենտի համար։ (Հ. Գ.)

—

Բուխարեստ, 24 սեպտեմբերի

Գերմանական արտաքին գործերի մինիստրը մեկնեց Վիէննա։ Մեկնելուց առաջ նա երկրորդ անգամ ընդունվեց թագաւորից երկարատև ունկնդրութեան։ Մինիստրի այստեղ մնալուն տալիս են քաղաքական նշանակութիւն։ (Հ. Գ.)

—

Բուխարեստ, 24 սեպտեմբերի

Բուլգարական գահաժառանգը գերմանական պրինցների և մինիստր-նախագահի հետ մեկնեց Սլատինա ներկայ լինելու զօրքերի վարժութիւններին։ (Հ. Գ.)

—

Սան-Ֆրանցիսկո, 24 սեպտեմբերի

«Ֆիօ» շոգենաւի վրա, որով պէտք է Զինաստան գնար պրինց Յզաիսուանը, ձերբակալվեցին 10 զինված չինացիներ։ Նրանցից մինը, որ պատանում է յեղափոխական կազմակերպութեան, խոստովանեց՝ որ մտադիր էր սպանել պրինցին։ Ձերբակալութեան ժամանակ նա մի քանի անգամ կրակեց ատրճանակից։ (Հ. Գ.)

—

Հռոմ, 24 սեպտեմբերի

Միջազգային գիւղատնտեսական ինստիտուտը հրատարակեց առաջին ժողովածուն գիւղատնտեսական կօօպերացիայի մասին։ Ժողովածուն տեղեկութիւններ է պարունակում Գերմանիայի, Աւստրիայի, Միացեալ-Նահանգների, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Դանիայի և Եապոնիայի գիւղատնտեսական կօօպերատիվ ընկերութիւնների մասին։ Ինստիտուտը յոյս է յայտնում, որ բոլոր պետութիւնների կառավարութիւնները նիւթեր ուղարկելով կաջակցեն ընկերութեանը։ (Հ. Գ.)

—

Մադրիդ, 24 սեպտեմբերի

Պալատին ներկայացվեց օրինագիծ $1\frac{1}{2}$ միլիարդի 4%-ային փոխառութիւն կնքելու մասին, որ հանգցվելու է 50 տարում։ Փոխառութեան գումարով յետ են գնվելու պետական գանձատան վկայականները, վերակազմվելու են զօրքերը և մինիստրութիւնները, ձեռք են բերվելու արտիլէրիական նիւթեր, նաև հանգցվելու են ներքին ու 5%-ային փոխառութիւնները։ (Հ. Գ.)

—

Համբուրգ, 24 սեպտեմբերի

Նաւաշինարար բանուորների և տէրերի միջև ծագած թիւրիմացութիւնները հարթվեցին։ Նախագծվող ընդհանուր լօկաուտն այլևս չի կայանայ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—«Բեպ»-ը հաղորդում է, որ շուտով բոլոր բեվիզիաներին վերջ է տրվելու։

«Бирж. Вѣд.»-ի աշխատակցի հետ խօսակցելիս Ս. Դուչկովը յայտնեց, թէ նա հաւատացած է, որ կառավարութիւնը Պետական Դումայում և Խորհրդում կանցկացնէ ռուսների և ֆիններին իրաւունքները հաւասարեցնելու և ֆիններից զինուորական տուրք առնելու օրինագծերը։ («Б.»)

—

Մոսկվա.—Մակլակովը այստեղ մի զեկուցում կարդաց երրորդ Պետական Դումայի գործունէութեան մասին։ Ի միջի այլոց նա ասաց. «Հոկտեմբեան Դուման վատաբարացրեց օբէնսդրութիւնը թէ քաղաքական և թէ սոցիալական շրջանում։ Անձի անձեռնմխելիութեան օրինագիծը թաղվեց ժողովրդի մէջ։ Հողային բարեկարգութիւնը Դուման հիմնաւորեց ստիպողաբար գրաւման սկզբունքի վրա, սակայն գրաւվում է միայն աղքատների հողը և տրվում է հարուստներին։ Պարլամենտական հսկողութեան մէջ մնում է դատարկ տեղ, որովհետև հոկտեմբերականները հպատակվեցին կառավարութեան։ Հոկտեմբերականների վարմունքը ֆինլանդական հարցում աւելի շուտ կործանեց, քան ամրապնդեց սահմանադրութիւնը։ Սպասվելիքի պարտականութիւնն է յիշեցնել հոկտեմբերականներին, որ Դուման սայթաք ուղիի վրա է գտնվում»։ («Б.»)

—

Պարիզ.—Նիցցայում անձնասպան եղաւ ռուս գեներալ բարոն Միլլէր-Զակոմէլսկիի որդին, երբ տեսաւ, որ իր արձակած գնդակը չը կպաւ իր սիրուհի Լինա Բէրջին։ («Б.»)

—

Կիէվ, 18 սեպտեմբերի

Սենատոր Ն. Պ. Գարինի հրամանով դատի ենթարկված գնդապետ Անտոնովը մեծ անցեալ ունի։

Մինչև ինտենդանտ դառնալը, Անտոնովը ծայառում էր Պետրոպավլովսկի բերդում և այնտեղ «օխրանայի» հրամանատարը և ռնտեսական մասի կառավարիչն էր։ Գնդապետի քէֆերը և շռայլ կեանքը իր վրա ուշադրութիւն հրաւիրեցին։ Բերդի հրամանատարը նախ հեռացրեց Անտոնովին տնտեսական մասի կառավարչի պաշտօնից և ապա առաջարկեց հրաժարական տալ։

Անտոնովը սկսեց ծառայել Կիէվի ինտենդանտութեան մէջ, և նա մի քանի տարուց յետոյ ունէր արդէն 150 հազար բուբլի։ Այդ փողերը արգելիքի տակ են դրված։ Անտոնովը հաւատացնում է, որ այդ փողերը տուել է նրան ի պահեստ մի տիկին։

Գեներալ Կամսարականի մօտ, որին նոյնպէս դատի է ենթարկել սենատոր Ն. Պ. Գարին, նոյնպէս գրաւված է 150 հազար բուբլի, որ փոխադրել են նրան արտասահմանից։ («Р. С.»)

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Պարիզ, 24 սեպտեմբերի

Նասր-ուլ-Միւլքը համաձայնեց դառնալ պետական խնամակալ։ (Հ. Գ.)

—

Ուրմիա, 24 սեպտեմբերի

Ասվից հաղորդում են, որ հաստատվեց ակցիզային վարչութիւն, որը յարուցել է ընդհանուրի դժգոհութիւնը։

Իշլալ-ուլ-Միւլքի կարգադրութեամբ ձերբակալված է տեղական սարբազների մոբիլիզացիային։ (Հ. Գ.)

—

Ինչպէս յայտնի է, կիլիկեան վերջին ջարդերի միջոցին՝ Ադանայի այն ժամանակվայ վալիի կողմից որպէս կասկածելի անձնաւորութիւն էր ներկայացված Ադանայի առաջնորդ Մուշեղ եպ., որին կենտրոնական կառավարութիւնը կարգադրել էր ձերբակալել և դատի ենթարկել։ Սակայն Մուշեղ եպ. կարողացաւ ժամանակին հեռանալ թիւրքական հողից ու ապաստանել եգիպտական կառավարութեան սահմաններում։ Օսմ. կառավարութիւնը յետագայում ի բացակայութեան դատապարտեց Մուշեղ եպիսկոպոսին որոշ պատժի։

Ներկայումս Կ. Պոլսի հայ թերթերը հաղորդում են, որ թիւրք կառավարութիւնը ներում է շնորհել Ադանայի նախկին առաջնորդին, և թիւրքահայոց պատրիարքը Դուրեան արքեպ. հեռագրով հաղորդել է ներման պաշտօնագիրը Մուշեղ եպիսկոպոսին՝ նրան Կ. Պոլիս հրաւիրելով։

—

Կ. Պոլիս.—Առաջիկայ զօրախաղերին զինուորական մինիստրութիւնը մտադիր է զօրքերին առաջարկել դիմադրութիւն ցոյց տալ իբր յարձակում գործող բոլգարներին։ Դրանում տեսնում են նշան գալիք զինուորական բարդութիւնների։ («Б.»)

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Վան, 26 օգոստոսի

Հետզհետէ պարզվում են կարճկանցի Մանուկի սպանութեան պարագաները ու երևան են գալիս գործի գաղտնիքները, որոնք ծածկվել էին մթութեան քողով։ Ոճիրը վերագրվում է պարզ տէրրօրի, որովհետև հաստատվել է, որ Մանուկը սպառնալիքներ էր ստացել հէնց իր մեռնելուց երկու օր առաջ և յայտնել շատերի։ Նոյնպէս հաստատվել է, որ տէրրօրիստ Դաւիթը նոյն օրը շատ տեղերում հետապնդել էր Մանուկին իր ընկեր Սարգսի հետ, որ արդէն՝ վիրաւորված՝ արդարութեան ձեռքն է ընկել և ի զուր է փորձում հաւատացնել, որ ինքը պատահմամբ է վիրաւորվել։ Իսկ նրանց կուսակիցները ի զուր են ճգնում հաւատացնել, որ Դաւիթը քարահանքից անդէն վերադառնալիս՝ յարձակում է կրել Մանուկից և Անուշաւանից և թէ սա մի ատոր դաւաճանութիւն է եղել սահմ.-ռամկավարների կողմից, ինչպէս տէրրօրիստի համակուսակից թղթակիցները գրում են իրանց օրգաններում։ Բայց ճշմարտութիւնը արևի պէս յայտնի ու պայծառ է, և ի զուր են այդպիսի թղթակիցները ճգնում քող քաշել նրա վրա։ Ճշմարտութիւնը չէ թաքնվում, երբևիցէ նա աքացի է տալիս և զգետնում ստութիւնը, կեղծիքը։

Վալի Բէքիր բէյը 15 իշ աւելի դաշնակ. երիտասարդների ղէնք տալով ուղարկել է ձերբակալելու Սայիդին։ 15 օրից աւելի է, որ նրանք գործի են սկսել մի դաշնակցական գիւղացու ղեկավարութեամբ, որ իբր թէ ծանօթ է այն տեղերին, ուր թաքնվում է Սայիդ, բայց դեռ ոչ մի արդիւնք չեն տուել և չէ յուսացվում, որ երբևիցէ օգտակար դառնան, բացի այն, որ գուցէ նորից խեղճ հայ գիւղացիներին մատնեն Սայիդի և ընկերների վրէժխնդրութեան։

Մտրակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀԱՄԱԿՐԵԼԻ ՅՕԲԵԼԵԱՆ

—

Նոր-Նախիջևանի հայ ինտելիգենցիան որոշել է հոկտեմբերի 10-ին տօնել երդ.-հաւատարմատար Գրիգոր Զալխուշեանի 25-ամեայ հասարակական գործունէութեան յօբելեանը։

Համակրելի յօբելեան, որին մենք ձայնակցում ենք մեր բոլոր սրտով։

Գրիգոր Զալխուշեանը անյայտ անձն չէ հայ հասարակութեան։ Նրա հասարակական գործունէութիւնը, իբրև դպրոցի հոգաբարձուի, բարեգործական Ընկերութեան նախագահի, քաղաքային ձայնաւորի, նրա գրական գործունէութիւնը, իբրև «Մշակի» երկարամեայ քանքարաւոր և արդիւնաւէտ աշխատակցի, իբրև գրողի, հրապարակախօսի՝ ծանօթ են ոչ միայն Ռուսաստանի, այլ և Թիւրքիայի, Պարսկաստանի հայութեան։ Գաղափարներով, ուղղութեամբ նա պատկանում է Գր. Արծրունու շկոլային, այն է՝ ազատամտական դպրոցին, և այդ ուղղութեամբ անշեղ, անսայթաք գործում է մինչև այսօր։ Նա ոչ միայն անկեղծ, սրտացաւ հայ է, այլ և արժանաւոր և սրտացաւ քաղաքացի, մարդասէր։ Ցիշենք այն ջանքերը, որ նա կատարեց, հրատարակելով ռուսերէն և հայերէն գրքեր թէ հայկական հարցի պաշտպանութեան համար Ռուսաստանի հասարակական կարծիքի առաջ և թէ Թիւրքիայի հայ տառապեալ ժողովրդին նիւթական օգնութիւն հասցնելու նպատակով՝ հանդիսանալով այդ կողմից մի երկրորդ Գրիգոր Զանշեան։ Ցիշենք այն հրացայտ զայրոյթով և պարսաւանքով, բայց և մարդկային մեծ կարեկցութեամբ լի յորդորները և յօդուածները, որ նա զետեղում է «Մշակի» էջերում, ձգտելով փափկացնել հայ հարուստների ապառաժ սրտերը, գըրգռել գութ և ողորմածասիրութիւն։

Այդպիսի մի հասարակական-գրական գործիչ, արդարև, արժանի է գնահատութեան և մեծարանքի, ուստի և գովելի է Նոր-Նախիջևանի հայ ինտելիգենցիայի որոշումը՝ տալ նրան այդ մեծարանքը և բարոյապէս վարձատրել մի գործչի, որ իր հաւատուութեան հետ միասին ունի և խոշոր արժանիքներ։

Գրիգոր Զալխուշեանի գործունէութեան գնահատութիւնը և բարոյական վարձատրութիւնը առաւելապէս ուրախալի է «Մշակի» համար և այն շատ հասկանալի պատճառով, որ նա եղել է երկար ժամանակ և է «Մշակի» քանքարաւոր աշխատակիցը։

«Մշակի» խմբագրութիւնը միանգամայն համոզված է, որ հայ հասարակութիւնը, համարելով Գր. Զալխուշեանի յօբելեանի տօնախմբութիւնը ոչ-մասնաւոր և տեղական մի գործ, այլ տօնախմբութիւն մի հայ քանքարաւոր գրողի, մի արդիւնաւէտ և բազմաշխատ հասարակական և ազգային գործչի, կը փութայ թէ Ռուսաստանից, թէ Պարսկաստանից և թէ Թիւրքիայից՝ միացնել իր գնահատութեան ձայները նոր-նախիջևանցիների ձայնին, հոկտ. 10-ին։

Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Ասլտարխան, 17 սեպտեմբերի

Երէկ, երեկոյեան ժամը 7-ին, տեղական առևտրական Իսաեվների գրասենեակը, քաղաքի յայտնի փողոցներից մէկի վրա, մրտնում են չորս անծանօթներ։ Մօտենալով Իսաեվին, նրանցից մէկը հանում է ատրճանակը և հրամայում է տեղից չը շարժվել։

Իսաեվը, սակայն, առանց ուշադրութիւն դարձնելու դրան, դուրս է փախչում ետևի դռնից և օգնութիւն աղաղակում։ Նրա ետևից արձակված գնդակները նրան չեն դիպչում։

Նկատելով առաջացած աղմուկը և իրարանցումը, յարձակվողները թողնում են գրասենեակը և սկսում են փախչել։ Նրանք իրանց հետևող քաղաքապահին երկու գընդակով սպանում են տեղնուտեղը։ Նոյն վիճակին է ենթարկվում և երկրորդը։ Զարագործները փախչելով անընդհատ կրակում և վիրաւորում են կրկին երկու քաղաքապահ ոստիկանների և կորչում են անհետ։

Այդպիսի յանդուգն փորձեր առաջինը չեն Աստրախանում և կարճ ժամանակի ընթացքում նրանք կրկնվեցին մի քանի անգամ։

Միայն ոչ մի անգամ էլ նրանք ոստիկանութեան ձեռքը չանցան։

Նովչէրկասկից ստացված հեռագրական կարգադրութեան համաձայն, մի քանի օր առաջ կալանաւորված և բանտն է տարված տեղական յայտնի հայ երիտասարդներից Յովհ. Մէգնիկեան։ Պահանջում են 15,000 ր. գրաւական ապատ թողնելու համար։

Աբ. Ապ.

—

Գոբի, 20 սեպտեմբերի

Շնորհիւ նոր հոգաբարձութեան ձեռք առած միջոցների, այս տարի Գոբու հայոց երկսեռ ծխական երկդասեան դպրոցում կանոնաւոր դասաւանութիւնը սկսվեց սեպտ. 1-ից։ Նորեկների թիւը շատ շատ էր, այնպէս որ 45 նորերին ընդունելուց յետոյ հոգաբարձութիւնը ստիպված եղաւ շատերին մերժել տեղ չունենալու պատճառով։ Աշ.-աշակերտուհիների թիւը հասնում է 140-ի, և որովհետև մեր ծխական դպրոցում սովորում են մեծ մասամբ արհեստաւոր և մշակ դասակարգի որդիները, հէնց դրա համար էլ հոգաբարձութիւնը ստիպված եղաւ էկսից աւելին ընդունել ձրի. պէտք էր տեսնել, թէ ինչ պատկեր էր ներկայացնում ընդունելութեան օրը դպրոցի բակը։ Այրի կանայք, օրականով բանող մշակներ, այգեպաններ, սայլապաններ հնից-նորից մէկ կերպ հագցրել էին իրանց որդիներին և բերել էին դպրոց. ոչ խնդիրք, ոչ ծննդեան թղթաւոր և ոչ էլ ծաղկի պատուասփան վըկայական. և չեն էլ իմանում, թէ ուր է հարկաւոր դիմել այս ամենը ստանալու համար, այնպէս որ հոգաբարձութիւնը ինքը ուրախութեամբ յանձն առաւ այս ամենը ձեռք բերելու. պէտք էր տեսնել, թէ տեղ չը լինելու պատճառով չընդունված երեխաները և նրանց մայրերը ինչպիսի լաց ու կոծով էին հեռանում դպրոցից. մարդու վրա կրակ էր թափվում, տեսնելով այդ 7—8 տարեկան մանուկներին ուսումի համար լաց լինելիս։ Թէև տեղի կողմից դպրոցը յարմարութիւն ունէր զուգընթաց դասարան բանալու, բայց դպրոցի նիւթականը չէ նեբում այդ անելու. դպրոցը այնքան եկամուտ չունի, որ իր ներկայ ծախսերը ծածկէ. դա բաւական չէ, հին հոգաբարձութիւնն էլ մօտ 1,600 ր. պարտք է թողել. թէ որտեղից պէտք է վճարել հոգաբարձութիւնը այդ պարտքը՝ չը գիտեմ, խեղճ հոգաբարձութիւնը մէջից կէս է լինում, ամեն կերպ աշխատում է դպրոցի բարելաւութեան համար։ Ի՞նչ կը լիներ, որ մեր օտար երկիրներում ապրող հարուստ հայրենակիցները իրանց կարողացածին չափ օգնէին մեր դպրոցին, ինչպէս այդ արեց Փոթիում ապրող մեր հայրենակից Միքայէլ Ալխազեանցը, ուղարկելով հոգաբարձութեանը 40 ր. յօգուտ դպրոցի։ Ցանկալի էր, որ մեր միւս հայրենակիցներն էլ նրա օրինակին հետևելով կատարէին իրանց բարոյական պարտականութիւնը դէպի իրանց մոռացված հայրենիքը և չը թողնէին, որ այսպիսի մի լաւ սկզբունքի վրա դրված դպրոցը նիւթական կողմից կաղայ։ Օգնեցէք, հայրենակիցներ, օգնեցէք. ձեր տուած կոպէկները այսպիսի հոգաբարձութեան օրով հազարների օգուտ կը բերէ մատաղ սերունդին։

Գոբեցի

—

Գիւմրի-Ճարտար (Շուշու. գ.), 15 սեպտ.

300 տնից բաղկացած մեր գիւղը տանջվում է ծարաւից։ «Ջուր չը կայ»—լսվում է թէ հարստի և թէ աղքատի բերանից։ Մի կուժ ջրի համար պիտի գնալ երկու վերստ հեռաւորութեան վրա գտնվող Ղուզէյ-Ճարտար, այն էլ ամբողջ ժամերով սպասել հերթի։

Մթթէ Գիւմրի-Ճարտարը անջրդի է. ապա նրա սարերի լանջից ու ձորերի միջից բղխող փոքրիկ աղբիւրները, որոնց միացնելով կը ստացվի բաւական քանակութեամբ

ԱՐՁԱԿԱՊԵՏ Հ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ

Գրադարանի հայկական բաժնի հիմնադրման 100-ամյակի առթիվ

Գրադարանի հայկական բաժնի հիմնադրման 100-ամյակի առթիվ ներկայացնում ենք գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի մասին հոդվածներ, որոնք հրատարակվել են «Գրական թերթ» շաբաթաթերթում։

Գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուն ունի 1500-ից ավելի ձեռագիր։ Դրանց մեծ մասը ստացվել է Ազգային գրադարան Ռուսաստանի կայսերական հանրային գրադարանի հիմնադրումից հետո։ Ձեռագրերի մեծ մասը գրվել է XVII–XIX դարերում։ Դրանց մեջ կան գրչագրեր, հնատիպեր, գրքի էջեր, գրչագրեր, նամակներ, գրքերի գրիչների հիշատակներ, գրքերի գրիչների հիշատակներ, գրքերի գրիչների հիշատակներ, գրքերի գրիչների հիշատակներ։

Գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի մասին հոդվածներ գրել է Ս. Ալիշանը։ Նրա հոդվածներում նկարագրվել են հայերեն ձեռագրերի հավաքածուի մասին։ Ալիշանը գրել է հայերեն ձեռագրերի հավաքածուի մասին

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ.. ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Հինգշաբթի, սեպտ. 24-ին, ռուսաց դրամատիկական արտիստների խումբը, ղեկավարութեամբ Նիկուլինի, ներկայացրեց Լէօնիդ Անդրէեվի մի նոր պիէսան՝ «Gaudeamus» կամ «Հին ուսանող» անունով՝ որ վերջերս մեծ աջողութիւն ունեցաւ մայրաքաղաքների բեմերի վրա։

Մի նախկին ուսանող ուսանողութեան ժամանակ գործած մի սխալի համար աքսորվում է և մնում է աքսորում 20 տարի։ Աքսորի մէջ նա ամուսնանում է և ունենում մի դուստր. կնոջն ու աղջկան սիրում է կաթոգին, բայց երկուսն էլ մեռնում են։ Եւ նա կորցնելով նրանց, որոնք իրան կապում էին կեանքի հետ և քաղցրացնում էին կեանքը նոյնիսկ աքսորի մէջ, վերադառնում է Մոսկվա արդէն հասակն առած՝ 47 տարեկան, ալեխառն մազերով, և նորից մտնում համալսարան, իբրև ուսանող։ Հոգով նա թարմ է և երիտասարդ, բայց մարմնով՝ ծերացած։ Եւ նա ընկնում է ուսանողների մի երկրպագութեան մէջ, ուր ծանօթանում է մի կուրսիստկայի հետ (Դինա-Շտէրն), որին քիչ-քիչ սիրահարվում է և մի րոպէ երազում է, որ բաղդաւոր կեանքը կարող է նորից սկսվել իր համար, բայց Դինա-Շտէրնը սիրում է երիտասարդ ուսանող Ալէքսանդրին, որ «տէնոր» անունով է յայտնի՝ իբրև երգիչ։

Պիէսայի մէջ դուրս է բերված ժամանակակից ռուս ուսանողութիւնը ի դէմս Օնուփրիի, որ մշտական ուսանող է և շաբունակ կոնծում է, Սատանայի՝ որ շաբունակ մռայլ է և նեստացիներ է կարդում՝ ճառելով Մարքսից և այլ հեղինակներից, և մի քանի այլ ուսանողների, որոնք միայն գիտեն քէֆ անել։ Ընկերները հին ուսանողին անուանում են միշտ «ծերուկ»։

Պիէսի այդ գլխաւոր հերոսի դերը կատարում էր Մուրօվցեվը, որ, արդարև, ամենատատանդաւոր կերպով տարաւ իր դերը։ Մնացածների մէջ Օնուփրիի դերը մեծ աջողութեամբ կատարեց Նէլիդովը, բայց չը նայելով դերասանների աջող խաղին՝ այնու ամենայնիւ պիէսան պէտք է համարել անայող և անմշակ։

Անդրէեվ կամեցել է արծարծել նորից այն հարցը, թէ «ինչի համար է ծերութիւնը, ինչի համար է մարմնական ծերութիւնը գալիս, երբ հոգին դեռ երիտասարդ և թարմ է». բայց այդ հարցերը մնացել են անլուծելի և նա չէ կարողացել ժպտել պիէսի մէջ այն խորութիւնը, որ պահանջվում է այդպիսի փիլիսոփայական հարցեր դնելիս։ Հ. Ա.

ՆԱՒԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մոսկվա, 17 սեպտեմբերի

«Սուրհանդակի» № 141-ում ուսանող Գ. Սարգսեանը «զանազան թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար պարտք է համարել հրապարակով յայտնել», որ 1907 թ. ինքը ստացել է նախկին ուսանող Ս. Զ. Էնիկոլոփեանից նրա պարտքը 10 ր. և յանձնել Ա. Թամագեանին։

Այդ առիթով ուսանողութեան վարչութիւնը իրաւունք է համարում իրան ուսանողութեան պաշտպանների ցուցակի մէջ մտցնել Ս. Զ. Էնիկոլոփեանի տեղ այժմեանից Գ. Սարգսեանին, որովհետև վերոյիշեալ գումարը չէ մտցված գրքերի մէջ, իսկ նախկին գանձապահ Ա. Թամագեանը փաստաւորկ և անհիմն է համարում Գ. Սարգսեանի հրապարակով յայտնած լուրը։

Մոսկվայի հայ ուսանող. հայրենակցական վարչութեան

Գործավար՝ Ուս. Վահան Մամիկոնեան

ԲԺՇԿԱԳԵՏ ԻԳՈՐ Ս. ԲԱԲԵԱՆԻ ՑԻՇԱՏԱԿԻ

—

Այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, Խօջիվանքի գերեզմանատանը, հանգուցեալ բժշկապետ Եգոր Ս. Բաբեանի դամբարանի վրա կը կատարվի հոգեհանդիսա։

Այսօր հանգուցեալի մահվան երկրորդ տարեդարձն է, սակայն նրա յիշատակը դեռ թարմ է մեր յիշողութեան մէջ։ Տխուր է նրա ընտանիքը, տխուր են նրա բարեկամները, նոյնպէս և խորը տխուր են այն բազմաթիւ ժարդիկ, որոնց նա ամեն ժամանակ այնպիսի սիրով և քաղցրութեամբ հանգուցացնում էր և թեթևացնում նրանց տանջանքները թէ իբրև բժիշկ և թէ իբրև սրբտագին և բարի ընկեր։

Դժուարին էր հաշվել այդպիսի մի ծանր և վաղաժամ կորստի հետ գլխաւորաբար այն մարդկանց նկատմամբ, որոնք երկար տարիներ ճանաչում էին հանգուցեալին իբրև գեղեցիկ սրտի և հոգու տէր մի անձն։

Այդպիսի մարդկանց երբէք մոռանալ չէ կարելի։

Ցաւերժ յիշատակ քեզ, ազնիւ և լաւ մարդ։ Գ.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

24 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Կապիտան Մացիեվիչը բարձրացաւ 1000 մետր։ Գործիքը անյայտ պատճառից կտրվեց. օդագնացը ընկնելիս մեռաւ։

Հողային բարեկարգութեան գլխաւոր վարչութեանը կից, գլխաւոր կառավարչի օգնական Իվանիցկիի նախագահութեամբ, բացվեցին այն յանձնաժողովի նիստերը, որ պաշտօն ունի քննել այն նախագիծը, որը վերաբերում է Թուրքեստանում և Անդրկովկասում արքունի ազատ հողերից մասնաւոր ձեռնարկողներին տալու՝ ոռոգելու և շահագործելու համար։

Քաղաքային դուման որոշեց պսակ դնել սպանված օդագնաց կապիտան Մացիեվիչի դագաղի վրա։

Պրոտասովը, որ յայտարարվեց իբրև մնանկ, ատրճանակից կրակեց և ծանր վիրաւորեց ակցիօներական ընկերութեան վարչութեան նախագահ Շուվալովին։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հերքում է լրագրական այն լուրերը, թէ հրահանգ է հրատարակված ուսանողական կազմակերպութիւնների վերաբերութեամբ։ Ցիշեալ կազմակերպութիւնների գործունէութիւնը կանոնաւորվում է բացառապէս Բարձրագոյն հաստատված 1907 թ. յունիսի 11-ի կանոններով։

ՎԵՍՏԿԱ։ Գիշերս սրտի պայթումից մեռաւ նահանգապետ Կամիշանսկին։

ՆՇՎՕՋԷՐԿԱՍԿ։ Մարիէվկի վարկային ընկերութեան կողոպտման գործի առիթով զինուորական դատարանը չորս հոգու դատապարտեց մահվան պատժի, երեք հոգու տասնհինգ տարով տաժանակիր աշխատանքների։

ՎԱՐՇԱՎԱ։ Գեն.-նահանգապետը պարտադիր որոշմամբ արգելեց լրագիրներում չը տպել գործադուլը խրախուսող յօդուածներ։

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ։ Բացվեց խնայողական և կօօպերատիվ գիւղատնտեսական ընկերութիւնների ներկայացուցիչների համագումարը։

ԻՇԻՄ։ Բանտում երկու բանտարկեալներ, փորձ անելով փախչել, յարձակվեցին բանտապահի վրա։ Մէկը սպանվեց, միւսը ծանր վիրաւորվեց և, վիրաւորելով բանտապահին, ինքնասպանութիւն գործեց։

ԲԱԼԱԽՆԱ։ Զէմստվային ժողովը որոշեց 1911 թ-ին աւարտել գաւառում ընդհանուր ուսման պլանը, միջոցներ ձեռք առնելով ֆիզիքապէս առողջացնելու երեխաներին։

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՎՍԿ-ԳՐՈՒՇԵՎՍԿ։ Երեք դիմափոխված չարագործներ յարձակում գործեցին նաւագնացութեան ռուսական ընկերութեան գանձապահ Պարամանովի վրա, որ հետը տանում էր 30,000 ր. բանուորներին բաժանելու համար։ Գանձապահը և նրան ուղեկցող չերքէզները կրակելով փախուստի դարձին չարագործներին, որոնցից մինը յետոյ սպանվեց, միւսը բռնվեց, երրորդը փախաւ։ Գանձապահը անվնաս է, փողերը տեղն են։

ՆԻԿՕԼԱՅԵՎ։ Կայարանում ճանապարհորդական գնացքը ընդհարվեր շոգեմեքենայի հետ։ Չորս մարդ վիրաւորվեցին, Լարդվեցին երեք վագոններ, գիծը փչացաւ. փչացան նաև երկու շոգեմեքենաներ։

ՍԻՌԼԷՑ։ Ռուսահպատակ Վիչմանը յանձնվեց գատարանին ռուսահպատակ Էյմոնդին սպանելուն համար։

Ժամ. Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինուորական մասնագետ-բժիշկների
ԵՐԹԵԼԻ հիւանդների համար
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մոտ.
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՕՊ.
Տելեֆոն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ։

ԱԽՎԼԵԴԻԱՆ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.։
ՈՒԿԼԱԴՆԻԿՕՎ Ի. Օ.—ներքին հիւանդութիւններ, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.։
ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 12—1 ժ. ցեր.։
ՐԻԴԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ. ցեր.։
ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—3 ժ.։
ԽԱՏԻՍՕՎ Ն. Դ.—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի և երեքշաբթից։
ՆՕՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 1—2 ժ.։
ՍԱՐԱՊ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.։
ՏԷՏՐԱՇԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.։
ԱՍԳԻՍՕՎ Ն. Մ.—ականջի, կոկորդի և քթի հիւ., առ. ժամը 1—2 ը ցեր.։
ԿԻՆ Բ.Ժ. ԻՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.,
ՎԵՍԵԼՕՎԶՕՐՕՎ Ն. Ն.—խիրուրգ. հիւ.։ ամեն օր՝ ցեր. ժամը 2—3-ը։
ԶՈՒՐԴՆՕՎՍԿԻ—ջղային, հոգեկ. հիւանդ. և էլեքտրոտերապիա., ամեն օր՝ բացի կիրակի օրերից՝ ցեր. ժ. 4—5-ը։
ՄԿՐՏՈՒՄԵԱՆ. — սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի, ամ. օր՝ 10½—11 ժ. առ.։
ՊՕՆԴՈՎ—ջղային հիւ. և էլեքտրոտերապիա. ամեն օր, ժամը 11—12-ը։
Համախորհուրդ, օպէրացիաներ, մասաժ, ծաղկի պատուաստումն, անալիզ, հիպնոզ,

ստնդումների և ծառաների քննութիւն—առանձին վճարով։ Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի։
(Կ.) 356. 100—53

ԲԺԾԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԻԼԳԻՍԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելիամինովսկայա փող. № 8
(Կ. Հ.) 564. 100—47

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
առանձնապէս ՍՏԱՄՈՔԻՍ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր՝ 10—11 ժ. առ. (երեխաների) 5—7 ժ. երկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տելէֆոն № 38
(Ե.Հ.Կ.) 909. 100—22

ՖԷԼԴՇԷՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ՄԵԳԻՏՈՒՆԱՅԻ
ՖԷԼԴՇԷՐ-ՄԱՍՍԱԺԻՍՏ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Կատարում է սրսկումներ, վէրքի փաթաթումն, դեղերի քսումն (втираніе) և այլն։ Բժշկութիւն տալարդի սեռական թուլութեան, անկարողութեան, սերմնահոսութեան եւ երազախաբի։ Մասաժ էլեքտրական և ձեռքով։ Բժշկական մարմնամարզութիւն։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների—վեներական, ներքին և այլ հիւանդութիւնների։ Ընդունելութիւնը 3—4½ ժամը ամեն օր։ Շաբաթներին ձրի միմիայն չորեքշաբթի օրերը։ Վօրոնցովի արձանի մոտ, Семеновская ул. № 9.
(Կ. Հ.) 913. 50—14

ՅԱՅՏՈՒԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրաւէր

Այսօր, կիրակի, սեպտեմբերի 26-ին Շամքորեցոց եկեղեցու ծխականները հրաւիրվում են ծխական ժողովի, որ կայանալու է ինձ վերաբերեալ մի շատ կարևոր հարցի առիթով։ Ժողովը երկրորդը լինելով՝ օրինական կը համարվի, որքան և ծխականներ լինեն ներկայ։

Սկիզբն է առաւօտեան ժամը 11-ին։
Երէցփոխ՝ Եփրեմ Մկրտուչեան
1124. 1—1

Ռուս լեզուի մէջ հմուտ և մաքուր առոգանութեամբ
ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉ,
որ երկար տարիներ եղել է Կովկասում և Կովկասից դուրս հայ և ռուս դպրոցներում, ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԱՇԱԿԵՐՏՆԵՐ պետական և հայ դպրոցների համար։
Դիմել «Մշակի» խմբագրութեան։
(Օ. Մ.) 1130. 20—1

Լոյս տեսաւ
ԶԵՌՆԱՐԿ
ԹԵԼԱԳՐՈՒԹԵԱՆ
(Ուղղագրական եւ բառակազ. վարժութիւններ)
ԳԻՆՆ Է 10 ԿՕՊԵԿ
Դիմել՝ Александрополь, учителю М. Тарахчіанъ, կամ՝ Թիֆլիսի գրավաճառներին։
(Օ. Մ.) 1102. 5—4

ԿՕՄԻՍԻՕՆԵՐԱԿԱՆ ՏՈՒՆ
Ա. Բարաչանեանի
ԲԵՐԼԻՆՈՒՄ
Ընդունվում են յանձնարարութիւններ ամեն տեսակ ապրանքներ գնելու և ծախելու։
Հասցէն՝ Berlin W. 8. Jager Strasse 6.
A. Babadjanian.
(Հ. Կ.) 1035. 8—8

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻ հայոց դպրոցի համար ՀԱՐԿԱՒՈՐ Է
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
11 դասով, 366 ռուբ. ռոճիկով։ Աւանդելու է ըստ նոր ծրագրի՝ հայրենագիտութիւն և երկրաչափական ձեռագիտութիւն։
1119. 3—2

ՈՎ ԽՆԱՅՈՒՄ Է ԿՕՊԵԿԸ,
ԿՈՐՑՆՈՒՄ Է ԲՈՒԲԼԻՆԵՐ!!
Մի գրաւիչ հրապուրիչ էժանութիւններով, որովհետև կորցնում էք ձեր փողերը։
3 ՌՈՒԲԼԻ 90 ԿՕՊԵԿՈՎ
ուղարկում եմ խակապէս ամուր և գեղեցիկ բրդէ կոստ՝ չէվիօտ «ՎԱՇԻՆԳՏՕՆ», 4¼ արշին, ազամարդկանց աշնանային ամրոզի զգեստացու։ Կոստը գործված է մոդային մուգ-քաւակուսեայ, շերտաւոր կամ բծեր ունեցող նախշերով, սև, մուգ կապոյտ, շագանակագոյն կամ ձիթագոյն։ Չէվիօտ «ՎԱՇԻՆԳՏՕՆ» կոստի ամենալաւ տեսակը՝ 4¼ արշ.—4 ռուբ. 75 կօպէկով։ ԾՐՈՒԲԵԼԸ ԵՒ ՃԱՆԱՊԱՐՀԱԾՔԸ ԻՄ ՀՇՁԻՆ։ Ուղարկում եմ պօստով, վերադիր վճ. և ՈՐԱՆՑ ԿԱՆԽՍԿՁՈՒ։ Միրքերի համար ամեն մի կոստին աւել հաշվվում է 75 կ.։ Ապրանքը եթէ դուր չը գայ՝ փողը վերադարձնում եմ։ Ով պատուիրէ 3 կամ աւելի կոստ՝ կցում եմ նաեւ լաւ սատանացու ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ՁՐԻ։
Պահանջները հասցէագրել՝ г. ЛОДЗЬ, № 170. М. Б. ТОРЧИНСКОМУ. Почт. ящ. 25.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(Կ.) (В. 57367) 1009. 5—5

ՔԱՄԱԼԵԱՆՑ Ս. դպրի
կազմած կրօնի դասագրքերը աշակերտների համար ըստ նորագոյն ծրագրի։
Ա. տարի՝ գինը 15 կօպ., Բ. տարի՝ 20 կ., Գ. տարի՝ 35 կ.։
Ուսուցչի ձեռնարկ «Կրօնի դասաւանութիւնը Ա. բաժանմունքում», գինը 40 կ.։ Գրքերը կարված են, կարմանէ կազմի կարիք չունեն։ Դպրոցներին 20% զեղջ։ Դիմել «Գուտտենբերգ» և «Կենտրոնական» գրախանութներին կամ կազմողին՝ Թիֆլիս, Միքայէլեան փող. № 82.
(Հ. Կ.) 1115. 3—2

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ
այգին բաց է թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պրատատու ծառեր ու զէկորատիվ բոյսեր։
Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.).
Կատալոգն ուղարկվում է ՁՐԻ։
(Կ. Հ.) 1068. 15—6

Հրատարակ. „ԱՐԱՐԱՏ" Տրավաճառ.
Լոյս տեսաւ և վաճառվում է
«ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ»
Ա. տարի
Յ. Տ. Մարտիրոսեանի և Ռ. Օհանջանեանի կազմած
հաստաձայն «Հայոց եկեղեցական տարրական դպրոցների ուսումնական ծրագրի».
60 նկարներով
(Մարդ, իրենդանիներ, բոյսեր, հանքեր և բնական երեւոյթներ).
Գինը 30 կօպ.
Գումարով գնողներին կանվի սովորական զեղջ։
Դիմել՝ Эривань, Книж. магаз. „Араратъ".
(Ա.Օ.) 1071. 10—10

Արմաւիրի հայոց եկեղ.-ծխ. դպրոցների հոգաբարձութիւնը
ՀՐԱՒԻՐՈՒՄ Է
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ,
որ աւանդելու է 11 դաս երգեցողութիւն, կատարելու է վերակացուի պաշտօն և կիրակի ու հանդիսաւոր օրերին աշակերտական խմբով երգելու է եկեղեցում։ Ցանկացողները կարող են իրանց պայմանը մինչև անգամ հեռագրով հաղորդել հոգաբարձութեանը՝ Армавиръ. Попечительству Армянскихъ училищъ.
(Ա.Օ.) 1122. 3—3

D-elle Française
cherche logement et nourriture en échange de leçons.
Excellentes recommandations. S'adresser: Бебутовская № 56, кв. Якулова.
(Օ. Մ.) 1110. 5—3

Ներսիսեան հայոց նախկին տեսուչ և կրօնուսոյց հանգուցեալ ՍԱՐԳԻՍ քահ. ԲԷԳ-ՆԱԶԱՐԵԱՆի
ՀԱՄԱՐՕՏ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ
դասագիրքը, որ կազմված է հայոց հոգևոր երկդասեան դպրոցների վերին և թեմական դպրոցների ստորին և միջին դասարանների համար, նոյնպէս և պետական դպրոցների բարձր դասարանների համար, ծախվում է տիկին Բէգ-Նազարեանի մօտ՝ Թիֆլիսում, Տուրգէնեվսկայա փողոց № 2.
Գինն է՝ կազմով՝ 60 կօպ.։
(Օ. Մ.) 1109. 3—3

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
Հիմնել ենք առևտրա-յանձնարարական և ներկայացուցչական
ԳՐԱՍԵՆԵԱԿ,
որտեղ ընդունում ենք զանազան առևտրական և առանձնապէս թարմ և չորացրած մրգեղէնի, կօնսերվաների և պիրէլների սպառման յանձնարարութիւններ։
Խնդրում ենք գիտուի հետ չը մոռանալ նմուշներ ուղարկել։
Ցարգանօք՝ Զ. Ն. ԽՐԽԱՐԵԱՆՑ եւ Տ. Զ. ԲԱԽՇԻՆՕՎ
Հասցէներ՝ С.-Петербургъ. Петербург. ст., Большой пр. 92.
Тифлисъ, Елизаветинская, 192.
(Կ.) 973. 15—6

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Բժշկապետ ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆԻ
ՍԻՖԻԼԻՍ
Հանրամատչելի՝ ընթերցանութեան համար, պատկերազարդ։
Գինն է 30 կօպ.
Դիմել բոլոր գրավաճառներին, կամ հեղինակի բնակարան՝ Ртищевская № 1.
(Օ. Մ.) 1085. 5—4

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
ԲԱԿՈՒ, угол Красноводск. и Меркурьевск., телеф. № 10—56.
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական և առևտրական կրթութիւն և պատրաստել հմուտ հաշվապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերում ուսանվում են 1) Առևտրական թւաբանութիւն և թւաբանութիւն հանրագրի վրա. 2) Հաշվապահութիւն արդիականական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական ոճաբանութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղագիր ձեռագիր). 7) Ուսուցումն գրամ մեքենայի մասին։ Ցանկացողների համար՝ առանձին վճարով տեսնէք և ստանաք գրաւիր։
Ուսումը սկսվում է՝ 1 սեպտեմբերի 20 ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում, առաւօտեան ժամը 9—12-ը և երեկոյեան 4—7 ը։
Կուրսերի կանոնադրութիւնը (программа) տրվում է ուղարկվում են ՁՐԻՑԲԱԼ։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову.
(Հ.Կ.) 884. 20—17

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի տեղեկութիւն տրակտիրների տերերի, որ հանձնաժողովը կանոնադրութեան 34-րդ, 35-րդ և 36-րդ կէտերի, 1911 թ. համար յօգուտ քաղաքի առնվելիք հարկերը գանձելու կոմիսարիատի ընդունելութիւնները տեղի կունենան այսպէս.
Գինեվաճառներինը և բէնկոշվօյնկուպնիներինը սեպտ. 26-ին, ցեր. ժամը 10-ին։
Գինեվաճառ նկուղներինը » » » ժամը 12-ին։
Գարեջրատներինը » » » ժամը 2-ին։
Սրճարաններինը և թէյարաններինը, ուր տրվում է նաև տաք կերակուր » » » ժամը 2-ին։
Ուտելեղէն վաճառող խանութներինը » » » ժամը 2-ին։
Իզնատատեղերինը » » » ժամը 2-ին։
Ցիշեալ հիմարկութիւնների տերերը հրաւիրվում են ներկայ գտնվել նշանակված օրը և ժամին Քաղաքային Վարչութեան շինութեան մէջ։
(Չ. ու. Կ.) 1108. 3—3

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱԻ
„ԱՐՓԻԿ"
Ալբանեարան հայախօս և օտարախօս մանուկների համար. բազմաթիւ պատկերներ և գրութեան օրինակներ։
Գինը 20 կօպ., զիջումը 20%։ Դիմել «Գիր» և «Գուտտենբերգ» գրախանութներին։ Ցօրինոդի հասցէն՝ Тифлисъ, Михайловскій пр. 70. Николаю Теръ-Гевондянъ.
(Օ. Ժ.) 1121. 5—2

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՆՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միքայէլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ աշակերտներին մասնագիտական առևտր. կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
ԴՈՐՆՆԱԿՆ զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Pitman և Գարլիպի Pigier գպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comtori-ում։ Նիստերն առնվում են բէյլ կեանքից։ Առարկաներն են. ա) ՊԱՐՏԱԳԻՐ.—1) Հաշվապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական նման), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 7) Առևտրական թղթակցութիւն, 8) Գայելչագրութիւն, արագագրութիւն (ամենայնտ ձեռքի ուղղագիր). բ) ՈՉ-ՊԱՐՏԱԳԻՐ.—1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) սղագրութիւն, 3) դակտիլոգրաֆիա (բեմնդատոն և ուր.) և 4) առևտրական թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-գաս։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքով բացվում է գուգընթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սեպտեմբերի 1-ից, առ. 10—2 ժ. մունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ առ. 10—2 ժ. և երեկ. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի չէնքում։
Կուրսերի հիմադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
907. 0—23

Տպագրված է „Տնտեսագիտ" Большая Ванкская № 3.